

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

9 հունիսի, 2001թ.

ք. Երեւան

Հունիսի 9-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետական կուսակցության 6-րդ համագումարը:

Մեկ րոպե լրությամբ հարզվեց 1999թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ոճրագործության ժամանակ զոհվածների հիշատակը: Նշվեց, որ առավոտյան ՀՀԿ խորհրդի անդամներն այցելել են Եռաբլուր:

Համագումարի նախագահողը՝ Ա. Մարգարյանը, հայտարարեց, որ ՀՀԿ 6-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար գրանցված է 526 պատվիրակ:

Հաստատման ներկայացվեց Կուսակցության 6-րդ համագումարի օրակարգի նախագիծը՝

- **ՀՀԿ խորհրդի նախագահի հաշվետու գեկուցում**
- **Խորհրդի անդամության թեկնածուների առաջադրում**
- **ՀՀԿ խորհրդի ընտրությունների անցկացում**
- **ՀՀԿ բանաձևի ներկայացում և ընդունում**
- **ՀՀԿ խորհրդի ընտրությունների արդյունքների հրապարակում**
- **ՀՀԿ խորհրդի նիստ՝ խորհրդի նախագահի ընտրություն**
- **ՀՀԿ խորհրդի նախագահի ելույթ**

Հաշվետու գեկուցումով հանդես եկավ ՀՀԿ խորհրդի նախագահ Ասդրանիկ Մարգարյանը:

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀԿ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ



Հարգելի հանրապետականներ, հարգարժան իյուրեր

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն այսօր հրավիրած իր 6-րդ համագումարում կփորձի անդրադառնալ բազում փորձություններով ու դժվարություններով լի անցած երկու տարում կուսակցության գործունեությանը, ձեռքբերումներին ու բացթողումներին, հասարակության մեջ առկա մտահոգություններին, պետության առջև ծառացած խնդիրներին, դրանց լուծման ուղիներին և այն սկզբունքներին, որոնք կուղենշեն կուսակցության հետագա գործունեությունը:

Որոշ սկզբունքների մասին մենք խոսել ենք կուսակցության խորհրդի ընդունված նիստերում՝ անդրադառնել ենք և երկրի ներքաղաքական իրավիճակին, և տնտեսական դաշտի

առանցքային խնդիրներին, և աշխարհաքաղաքական ներկայիս գործընթացներում մեր պետության ներգրավածության ու դիրքորոշումներին:

Մեր մոտեցումները մշտապես բխել են մեկ գերազույն նպատակից, այն Ե՛ ազգային արժանապատվության գիտակցմամբ պետության հզորացում, պետականության ամրապնդում և հայ մարդու, Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքի ու կենցաղի ապահովում, որին ստորադասելի են ցանկացած այլ շահեր և նպատակներ:

Սրաք մեզ համար լոկ խոսքեր չեն եղել: Բոլորին հայտնի է, թե ինչպիսի օրգացումներ տեղի ունեցան անցած մեկուկես տարում և ինչ ծանր փորձությունների գնով կարողացանք երկրում պահպանել կայունություն, հաճախ, կուսակցական շահը, սկզբունքները մի կողմ դնելով և մտածելով շատ ավելի կարևորի մասին:

Հանրապետական կուսակցությունը, իբրև Ազգային Միացյալ կուսակցության գաղափարական ժառանգորդ, որի համար անկախ և հզոր հայրենիքի գաղափարը, ցեղահավատությունը, ցեղի արյունը, վեր է ամեն ինչից, երբևէ չի հեռացել իր արմատներից, անառարկելիորեն առաջնորդվելով Նժդեհյան հզոր գաղափարախոսությունը խտացնող խոսքերով. «Խաղաղության ժամանակ գուցե և կարելի է ապրել առանց ցեղակրոնության, վտանգի ժամանակ՝ երբեք»:

Ցավոք, ինչպես Նժդեհյան ժամանակներում, այսպես էլ մեր օրերում մենք պարտադրված ենք անընդհատ հաշվի նստել մեր ազգային ինքնությունը, հավաքական կամքն ու հավատը կորցնելու վտանգի հետ, ամեն անգամ վճռորոշ պահերին համախմբելով մեր մտքի ու բազկի մեծությունները: Այդ վտանգին դիմակայելու նպատակով միավորվեցին հանրապետականներն ու երկրապահները, այնուհետև ժողովրդական կուսակցությունը, որի արդյունքում ծնվեց «Միասնություն» դաշինքը:

Նրանց, ովքեր այսօր փորձում են խմբագրել անցյալը, հարմարեցնելով այն իրենց այսօրվա խնդիրներին ու ճշգիմ նպատակներին, ուզում եմ իշխեցնել, թե ինչ իրավիճակում և ինչ նպատակով Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ երկրապահները միացան հանրապետականներին: Երբեք տարի առաջ, 98-ի հուլիսին քաղաքական իրադրությունը ստիպեց համախմբել այն ուժեղը, որոնք ունեին գաղափարական ընդհանրություններ, պետության առջև ծառացած խնդիրները լուծելու քաղաքական նույնատիպ դիրքորոշում և գործելակերպ: Այսինքն, ստեղծել երկիրն այդ բարդ իրավիճակից դուրս բերելու ունակ մի քաղաքական շարժում, որը կընդգրկեր ոչ միայն հասարակական-քաղաքական կազմակերպությունների, այլ նաև անհատների, հատկապես մտավորականների հսկայական ներուժը:

Մեր միասնության խնդրում իիմնական դեր էր խաղում այն, ինչի համար ելել եինք պայքարի. անկախ պետության ստեղծում և ամրապնդում, տնտեսական բարեփոխումներ, միշագային հանրության կողմից Հայաստան պետության նկատմամբ վստահության ամրապնդում, տարածաշրջանի քաղաքական, տնտեսական գործընթացներին ակտիվ մասնակցություն:

Կուսակցության անդամագրվեցին քաղաքականությամբ գրադարձու ցանկություն ունեցող երկրապահ կամավորականների միության բազմաթիվ անդամներ, անհատներ, որոնք ունեին ազգային, պետական մտածողություն: Մեկ տարի անց՝ 99-ի խորհրդարանական ընտրությունների շեմին, քաղաքական դաշտում արդեն իր վճռորոշ տեղն ունեցող Հանրապետական կուսակցությունը, քաջ գիտակցելով ժողովրդի հավաքական ուժի հզորությունը և ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական վիճակից երկիրը դուրս հանելու համար բռունքը կերպությունը, միասնականության ժամանակի հրամայականը, նույն խնդրով մտահոգ Հայաստանի ժողովրդական կուսակցության հետ կազմեց «Միասնություն» դաշինքը, որի անունը պատահական չէր ընտրված և հավակնում էր լինել ավելին, քան սուսկ երկու կուսակցությունների ուժերի համախմբում: Դաշինքը հանրապետության քաղաքական դաշտի մյուս ուժերին համագործակցության կոչ արեց՝ հայտարարելով, որ նրանց առջև իր դժուները բաց են, քանզի, ի վերջո, բոլորիս նպատակը մեկն Ե՛ հզոր պետության ստեղծում, որի քաղաքացիները կապրեն արժանապատվորեն, աշխարհի այլ ազգերի ու ժողովրդների նման իրենց կայուն տեղն ունենալով այս արևի տակ: Սա հզոր գաղափարախոսություն է, որը,

ցավոք, ո՞չ այս ժամանակ, ո՞չ ել այսօր շատ քաղաքական ուժեր այդպես ել չըմբռնեցին իր ամբողջ խորությամբ, առանձնակի հրճվանք ապրելով դաշինքի այս կամ այս փոքրիկ անհաջողության, դժվարության ժամանակ: Կարծում եմ, հարկ չկա մանրամասնելու «Միասնության» անցած ճանապարհը ընտրություններից մինչև օրս, քանի որ այդ մասին բազմից խոսվել է: Հարկ է, սակայն, խոսել հաղթանակած քաղաքական միավորման ստանձնած պարտավորությունների, պատասխանատվության մասին, այն նախընտրական խոստումների ու ծրագրերի մասին, որը դաշինքի մաս կազմող Հանրապետական և Ժողովրդական կուսակցությունները պարտավորվել են իրագործել: Այս հարցում Հանրապետական կուսակցությունը, հավատարիմ մնալով որդեգրած սկզբունքներին՝ առանց բարձրագոչ խոսքերի, անտրոտունչ տարել և տանում է պատասխանատվության իր ծանր բեռը: Սակայն, հանուն անկեղծության պետք է ասել, որ դաշնակցի աշակցությունը միշտ չէ, որ զգացել ենք մեր թիկունքին: Բնականաբար, դաշինքում երկու տարբեր քաղաքական ուժեր են, որոնք կարող են առանձին հարցերում ունենալ տարբեր տեսակետներ, սակայն նման հրավիճակն անթույլատրելի է սկզբունքային հարցերում, որոնց շուրջ ձևավորվել է դաշինքը: 1999-ի հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը ծանր փորձության ենթարկեց դաշինքը՝ գլխատված քաղաքական ուժը բազմից փլուզման եզրին հայտնվելով, այսուամենայնիվ, կարողացավ իր մեջ ուժ գտնել, անսեղի ցավից ատամները սեղմել և առաջ նայել: Սակայն դաշինքում գտնվեցին և երերացողներ, որոնք ընկրկեցին դժվարությունների առաջ:

Հանրապետականներիս համար դաշինքի պահպանման ուղղված ջանքերն ինքնանպատակ չեն: Թերևս, շատերն են անհամեր սպասում նրա փլուզմանը. ոմանք իրենց ինչ-ինչ ինսդիրները լուծելու քաղաքական դաշտում նոր վերաձևումներ անելու, մյուսները՝ այդ դաշտում վերջապես ինքնահաստատվելու ակնկալիքով:

Ակնհայտ էր, որ այդ ամենի արդյունքում սպասվում էր միշկուսակցական պայքար, որը մեր իրականության մեջ լավ գիտենք, թե ինչ է նշանակում: Ակնհայտ էր նաև, որ այդ պայքարը շլատելու էր քաղաքական դաշտը՝ ի դերս հանելով մեծ շանքերի գնով երկրում հաստատված փուլիր կայունությունը: Դա իր ուղղակի բացասական հետևանքն էր թողնելու առանց այն ել չափազանց ծանր վիճակում հայտնված տնտեսության վրա, որի համար յուրաքանչյուր կորցրած օրը նոր բերի ավելացում էր նշանակելու: Կարծում եմ, նման գործընթացները հասկանալի են շատերի համար, բայց քաղաքական արենայում մեծ դերակատարում ունենալու անզուսպ ցանկությունը մի շարք ուժերի ոչ մի կերպ հանգիստ չեր տալիս և այժմ էլ շարունակում է խիստ մտահոգել:

Միա կողմին չեմ կարող, սակայն, չնշել ստեղծված իրավիճակով մտահոգ այն ուժերին, որոնք երեք իրենց թույլ չտվեցին օգտվել «Միասնություն»-ում ծագած դժվարություններից, և որոնցից կարող էր յուրաքանչյուրն իր օգուտն ունենալ: Սա, իսկապես, գնահատելի է, քաղաքական դաշտում չգրված խաղի կանոններին հարիր:

Անցյալի վրա շատ չծանրանամ, երկար ժամանակ չի անցել, և ամեն ինչ բոլորին հիշողության մեջ դեռ թարմ է:

Հոկտեմբերի 27-ից հետո Արամ Սարգսյանի վարչապետության շրջանի մասին բազմից եմ տարբեր առիթներով նշել՝ իսկապես գնահատելով այդ ծանր, պայթյունավտանգ իրավիճակում շանթարգելի դեր ստանձնած կառավարության դեկավարին, որին անվերապահորեն սատարել է Հանրապետական կուսակցությունը: Սակայն, ցավոք, քաղաքական գարգացումներն այլ ուղիով ընթացան: Կարճ ժամանակ հետո իշխանությունների միշտ ծայր առած և օրեցօր խորացող հակասություններն ու լարվածությունը, անվստահությունը, տնտեսության մեջ նկատելի անկումը, նոր վտանգի առաջ կանգնեցրին երկիրը: Մեր բոլոր շանքերը պետական կառավարման համակարգում այդ պառակտիչ և վտանգավոր միտումները կանխելու ուղղությամբ մեծ արդյունք չտվեցին, քանզի դրանք հակադրվում էին անդրկուլիսյան խարդավանքներով:

Վտանգավոր խաղ էր սկսվել, որի արդյունքում գուցեն կորցնեինք մեր պետությունը: Քանի դեռ լուրջ հիմքեր, հստակ փաստեր չեն բերվում, որոնց դեպքում Հանրապետական իր վերաբերմունքը, բնականաբար, կարտահայտի, մենք գերծ կմնանք այդօրինակ խարդավանքների մեջ ներքաշվելուց և ինչ-որ մարդկանց շրադացին շուրջ լցնելուց: Այս ամենը կարող է կործանարար լինել: Մեր ամբողջ պատմությունը դրա վառ օրինակն է՝ հայոց

պետությունները տարբեր ժամանակներում կործանվել են հիմնականում ներքին պառակտումների, խարդավանքների, դավաճանությունների, անմիաբանության պատճառով: Անթույլատրելի է, որ նորանկախ մեր պետականությունը, որի համար անչափ թանկ ենք վճարել բոլորս, արժանանա նույն ճակատագրին:

Կասկածամտությունը, չարությունը, չկամությունը, «մեր ներսի ժանգը», ինչպես Վազգենը կասեր, ուտում ու սպառում են մեր ուժերը, որոնք այսօր պետք է նպատակառությեինք պետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմանը: Զարմանալի բան է. այս փոքրիկ երկրում բոլորը իրենց նախագահ, վարչապետ, նախարար կամ այլ բարձրաստիճան պաշտոնյա են պատկերացնում:

Անցյալ տարվա մայիսին, երբ քննարկվում էր նոր ծևավորվող կառավարության գործունեության համար պատասխանատվություն վերցնելու խնդիրը, Յանրապետական կուսակցությունը չերկմտեց ու չխուսափեց իր ծանր բեռջ ուսելու կամ, ավել ճիշտ, այն շարունակաբար տանելու գործընթացից: Նրա համար միանշանակ էր, որ ընտրություններում հաղթանակած դաշինքն իր խոստման տերը պիտի լիներ, դաշինքը պիտի շարունակեր գործել, պետք է պահպանվեր ստատուս-քվուն: Մեր դիրքորոշումը հստակ էր, տրամաբանական և սկզբունքային: Չնայած ՀԺԿ-ն ոչ միայն չառաջադրեց վարչապետի պաշտոնի համար իր թեկնածուին, այլև չսատարեց Յանրապետական կուսակցության թեկնածուին, այնուհանդերձ հանրապետականները երկրի նախագահին վստահեցրին, որ իրենք պատրաստ են պատասխանատվություն վերցնելու և չխախտելու մինչ այդ եղած ստատուս-քվուն: Սա քաղաքական քայլ էր, քանի որ կուսակցությունը դաշինքի նախընտրական խոստումներն եր դուել իր կազմած կառավարության գործունեության հիմքում և պիտի դրա տերը լիներ, հակառակ դեպքում որևէ այլ վարչապետ պարտավորված չէր լինի «Միասնության» ծրագրով առաջնորդվելու, ավելին, գուցեն միանգամայն այլ՝ տրամագծորեն հակառակ ծրագիր կազմեր իր գործունեության համար:

Այդ դեպքում ի՞նչ էին արժենալու մեր հայտարարությունները, թե ժողովրդի առջև տված խոստումները չպետք է հիշել ընտրությունից ընտրություն, կամ թե ժողովուրդն իր քվեն տվել է «Միասնությանը», և դաշինքն ամեն ինչ կանի արդարացնելու նրա հույսերը: Յանրապետականը գտնում է, որ «Միասնություն» դաշինքը պետք է պահպանվի, որովհետև ինքնանպատակ չի ստեղծվել, ստացել է ժողովրդի վստահության քվեն և պարտավոր է այն արդարացնել, կատարել նախընտրական շրջանում տված խոստումները: Բացառապես այս գիտակցմամբ կուսակցությունը վարչապետի պաշտոնում առաջադրեց իմ թեկնածությունը՝ շատ լավ պատկերացնելով նաև, թե ինչ ծանր ու փորձություններով ճանապարհ է սպասվում:

Ցավոք, այդ կանխատեսումները կարճ ժամանակ հետո արդարացան: Կառավարությունը անգամ մի փոքր դրական տեղաշարժի հասնելու համար ստիպված էր հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, մեծ մասը արհեստականորեն ստեղծված: Ստիպված էր անընդհատ գոյն լինել՝ թիկունքից հարված չստանալու համար, թեպետ, այնուամենայնիվ, դրանք լինում էին այնտեղից, որտեղից քիչ սպասելի էին: Պատերազմում գոյն գիտես ում հետ գործ ունես և ինչպես վարվես, ներքին թշնամու դեմ կորիզը շատ ավելի ծանր է և ծանր է առաջին հերթին հոգեբանական առումով:

Այնուամենայնիվ, կառավարությունը և նրա գործունեության պատասխանատվությունը ստանձնած Յանրապետական կուսակցությունը ուժ գտան հաղթահարելու այդ ամենը, և մեկ տարի հետո խոսելու տևականության մեջ որոշակի դրական տեղաշարժերի մասին: Այդ ամենը հրապարակված է, մանրամասն վերլուծված: Նպատակահարմար չեմ գտնում ծանրաբեռնելու ձեզ թվերով և փաստերով:

Տարբեր առիթներով նշել եմ և կրկնում եմ՝ կարելի էր շատ անել, հասնել ավելիին, բայց այս իրավիճակում, որում աշխատեց կառավարությունն անցած մեկ տարում՝ իր հնարավորությունների կարելվույն չափով, մեծ շանքերի ու նյարդերի լարումով, շատ մեծ արդյունք ակնկալել հնարավոր չէր: Յիշենք արտաքին աղբյուրներից ֆինանսավորման բացակայությունը, ամիսներ շարունակ միայն ներքին ռեգերվսների հաշվին աշխատանքի կազմակերպումը, տարեսկզբին բյուջեի մուտքերի թերիավաքագրումը և ձևագնդի նման

ՄԵԾԱԳՈԴ ՍՊՀԻԱԼՎԱԿԱՆ պարտքերը:

Կառավարությանը հաջողվեց նաև առանց հանրապետականների դաշնակցի աջակցության խորհրդարանում անցկացնել կարևորագույն մի շարք օրինագծեր, իսկ մինչ այդ՝ ստանալ իր գործունեության ծրագրի հավանությունը:

Դա հաջողվեց խորհրդարանական քաղաքական ուժերի հետ համագործակցության, կառուցողական աշխատանքի արդյունքում:

Ծառ է խոսվում «Միասնության» ծրագրի, նրան հավատարիմ մնալու կամ նրանից շեղվելու մասին: Ոչ մեկը հստակ չի ասում, որտեղ շեղում կատարվեց, ինչը հակառակ արվեց կամ չկատարվեց: 1998թ. մայիսի 30-ից հետո եղել է 3 կառավարություն՝ Վազգեն Սարգսյանի, Արամ Սարգսյանի և իմ ղեկավարությամբ: Ներկայացվել են կառավարության գործունեության ծրագրերը, քննարկվել «Միասնություն» դաշինքում, հաստատվել Ազգային ժողովում: Այդ ծրագրերը չեն քննադատվել դաշինքի կողմից, եթե քննադատություն երբեւ եղել է, ապա մի քանի կուսակցությունների կողմից և որոշ դրույթների վերաբերյալ միայն: Այս կառավարությունը գործում է բաց ու հրապարակային: Արդեն երկրորդ տարին է հաստատում է ծրագրի կատարման միջոցառումների ցանկ՝ կատարման հստակ ժամկետներով, պատասխանատումներով, ֆինանսավորման աղբյուրներով, և հանձնում քաղաքական ուժերի ու հասարակության վերահսկողությանը, ժամանակ առ ժամանակ հաշվետվություն ներկայացնում կատարման ընթացքի մասին: Անցած տարեվերջին բոլոր նախարարները իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություն ներկայացրեցին վարչապետին, որը և ամբողջությամբ ներկայացվեց հասարակությանը:

Անցած ժամանակահատվածում կուսակցությունը կառողացավ պայմաններ ստեղծել հեկտեմբերի 27-ից հետո ստեղծված իրավիճակից պետությունը առանց ցնցումների դուրս բերելու համար: Ամեն շանք գործադրվեց, որ համագործակցված աշխատեն իշխանությունները՝ նախագահը, կառավարությունը, Ազգային ժողովը:

Այսօր և այն կողմից են քննադատություններ լսվում հանրապետականների՝ իբր հարմարվողականության վերաբերյալ: Որակում, որի հետ բացարձակապես համաձայն չեմ: Ես հասկանում եմ այդպես արտահայտվողներին: Նրանք հաջորդ պահին կծափահարեին հանրապետականներին, եթե վերջինս սրեր հարաբերությունները երկրի նախագահի հետ, նրան դեմ դուրս գար: Կարևոր չէ, դրա համար լուրջ պատճառներ, հիմքեր կան, թե ոչ: Բայց կներեք, պարունայք, ձեր անձնական ինտիմները լուծելու, հավակնություններն ու ախորժակները բավարարելու ցանկությունը շատ քիչ է, որպեսզի Յանրապետական կուսակցությունն այդ հարցում դառնա ձեր համախոհը: Յանրապետության ներկային նախագահին սատարելու պատճառների մասին խոսվել է 98-ին, և այն սկզբունքները, որոնց շուրջ միասնական դիրքորոշում է ամրագրվել ընդհանուր ճանապարհ անցնելու մտայնությամբ՝ մինչ օրս չեն խախտվել: Դրանք երկրի համար վճռորոշ սկզբունքներ են: Նրանցից շեղվելու դեպքում միայն, (իսկ այսօր նաև հոկտեմբերի 27-ի գործում այսպիսի բացահայտումներ անելուց հետո, որոնք դեպի պետական բարձրագույն օդակներ կտանեն), Յանրապետականը, թող ոչ ոք դրանում չկասկածի, իր կոշտ մոտեցումը կարտահայտի: Իսկ քանի դեռ ոչինչ պարզ չէ, կտրուկ քայլեր անելը ոչ միայն լուրջ չէ, այլ՝ խիստ վտանգավոր:

Պետության նկատմամբ այդքափ անլուրջ վերաբերմունքը, երբ որևէ մեկը, ինչ-որ բանից դժգոհ լինելով, ոչ ավելին, ոչ պակաս պահանջում է նախագահի, վարչապետի, նախարարի կամ բարձրաստիճան այլ պաշտոնյայի հրաժարականը, ու հետագայում իր ամբողջ գործունեությունը բխեցնում դրանից, իսկապես մտորելու տեղիք է տալիս նման մարդկանց իրական նպատակների մասին: Քաղաքական լարված մթնոլորտում, սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող երկրում խաղալ ժողովրդի բաց նյարդերի հետ՝ բարոյական չեն:

Կատարված դրական տեղաշարժերը չտեսնելը ոչ թե չհասկանալու հետևանք է, այլ հետևողականորեն անցկացվող քաղաքական գործընթաց: Տնտեսության աճ, ներդրումներ, գործարարության խթանում, դրա համար բարենպաստ պայմանների ստեղծում, բյուջետային աշխատավարձերի և թոշակների ժամանակին վճարում, եկամուտների հավաքագրում, միջազգային կազմակերպությունների հետ գործարար հարաբերությունների հաստատում: Այս ամենը անհանգստացնում, նյարդայնացնում է այն ուժերին ու անհատներին, որոնք

ցանկանում էին հոկտեմբերի 27-ից հետո Երկրում ստեղծել անկայուն վիճակ, կատարել իշխանափոխություն, քաղաքական դիվիզնեսներ ձեռք բերել, իրենց կուսակցության կամ սեփական հավակնությունները բավարարելու համար:

Եվ ոչի չի մտահոգում, թե մի կերպ կայունացող Երկրում այս անվերջ տեղաշարժերը, ամեն անգամ ամեն ինչ սկզբից սկսելը ի վերջո ինչի՞ է հանգեցնելու:

Հոկտեմբերի 27-ի ոճրագործության մեղավորների բացահայտման և դատապարտման հարցում Յանրապետական կուսակցության հավասարակշիռ պահվածքը, պետության մեջ սեփական օրենքները հարգելու և դրանցով առաջնորդվելու մոտեցումները, չգիտես ինչու, ոմանց համար դժվար ընկալելի ու ընդունելի են: Եթե որևէ մեկին թվում է ինքն ավելի շահագրգիռ է արդար դատի հարցում, քան Յանրապետական կուսակցությունը, չարաչար սխալվում է: Ավելորդ եմ համարում այդ մասին Երկար-բարակ խոսելը: Յասկանալու համար նախ և առաջ ցանկություն է պետք: Ցավոք, ոմանց մոտ այս չկա՝ հասկանալի պատճառներով:

Ցավի մասին ավելի բարձր ու ամեն օր գոռալը, ոճրագործներին ամենաշատ ու ամենավիրավորական արտահայտություններ հասցեագրելը մտահոգվածության, սրտացավության ու վրդովմունքի չափանիշ չէ: Մենք մեր ցավը, որ միայն Յանրապետականինը, ՀԺԿ-ինն ու Երկրապահինը չէ, այլ մի ամբողջ պետությանն ու ժողովրդինը, տանում ենք տղամարդուն վայել զսպվածությամբ, չենք ուզում տարբերակում ոնել, թե նահատակները որ կուսակցությանն են պատկանել, որովհետև նրանք հայ ազգինն են, չենք ուզում այդ անունները շահարկելով քաղաքական դաշտում դիվիզնեսներ շահել, նախաձեռնությունների մրցավազք սկսել՝ անգամ չկարևորելով դրա իմաստը, որովհետև այդ ամենը բարոյական չէ, որովհետև դա չէ ինտիրը, այլ այս պետությունը հզորացնելը, որի համար Վազգեն Սարգսյանը, Կարեն Դեմիրճյանը, Յուրի Բախչյանը, Ռուբեն Միրոյանը, Միքայել Քոթանյանը, Արմեն Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը, Լեռնարդ Պետրոսյանը զոհեցին իրենց կյանքը, ինտիրը սա է, այլ ոչ թե տարբեր առիթներով նրանց խոսքերը մեշքերելով տպագործություն գործելը: Յանրապետականները սոսկ նրանց կողմանակիցները չեն, այլ հետևողինները, որ անվերջ խոսելու ու խարդավանքներ սարցելու փոխարեն նախընտրում են գործը, այս պետության հիմքերի ամրացման համար մեկ քար ավելացնելը: Կարևոր չէ, թե այսօր նրա դեկավարը Երկրի վարչապետն է, որովհետև այդ ամեն անցողիկ է և ամենսկին ոչ եւական: Կարևոր այդ գաղափարները գործի վերածեն է, որ դեռևս 60-ականներից բերելով՝ կուսակցության ներկայի շատ անդամներ հասցրել են մեր օրերը՝ հույս փայփայելով դրանք երբեմ իրագործված տեսնել: Ոչինչ միանգամից չի լինում, և անհաջողություններից ել չաետք է հուսահատվել: Սա է մեր Երկիրը, մեր ինքնիշխան պետությունը: Լավն է այն, թե վատն է՝ մերն է: Անացնել այն, արժեզրկել անկախության գաղափարը՝ դրանք պատճառաբանելով օրվա դժվարություններով, մենք համարում ենք անընդունելի, և մեր հետագա ամբողջ գործունեությունը նպատակառուղղելու ենք այդ դժվարությունների հաղթահարմանը, հզոր, բարեկեցիկ պետության կայացմանը:

Այժմ բոլորիս անչափ հետաքրքրող սահմանադրական բարեփոխումների մասին՝ Յանրապետական կուսակցությունն՝ ի կատարում «Միասնություն» դաշինքի և ՀՀ նախագահի նախընտրական խոստումների, 1999թ. դեկտեմբերից ՀԺԿ-ի հետ միասին ձեռնամուկն Եղավ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու գործընթացին:

Յանձնախումբը մի քանի անգամ խորհրդատվական հանդիպումներ է ունեցել Վենետիկի հանձնաժողովի հետ, ստացել վերջինիս առաջարկները, քննարկել դրանք: Միաժամանակ համագործակցել ենք ՀՀ նախագահի կողմից ստեղծված Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի հետ: Այժմ հիմնականում պատրաստ է Սահմանադրական բարեփոխումների վերջնական տարբերակը, որը մինչև Աժ Ներկայացնելը կընսարկվի բոլոր քաղաքական ուժերի հետ:

Ինչպես գիտեք, այժմ քննարկումների փուլում են նաև այնպիսի կարևոր նախագծեր, ինչպիսիք են «Ընտրական օրենսգիրքը», «Կուսակցությունների մասին» օրենքը, «Յասարակական կազմակերպությունների մասին» օրենքը, ուրիշ այլ օրենքներ, որոնք անհրաժեշտ են քաղաքական դաշտում գործող ուժերին՝ հստակեցնելու համար իրենց ապագա գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը: Քննարկումների

ժամանակ եկել ենք միասնական այն եզրակացության, որ որքան շուտ ընդունենք այս օրենքները, այնքան բարենպաստ պայմաններ կուսակցությունների կայացման, գարգացման, քաղաքական դաշտի ձևավորման համար: Մենք շահագրգիռ ենք մինչև տարեվերջ ավարտել այս գործընթացը:

Յանրապետական կուսակցությունը պատրաստ է շարունակելու համագործակցություն այն բոլոր քաղաքական ուժերի հետ, որոնք քաղաքական համաձայնության դաշտում աշխատելու շահագրգրվածություն են ցուցաբերում:

Անտարակույս է, որ երկրում իրականացվող տնտեսական և քաղաքական արդեն անշրջելի դարձած գործընթացների բնույթը անհրաժեշտաբար ենթադրում է պետական կառավարման համակարգի արդյունավետության ու կառավարման կառուցվածքի կատարելագործման ուղղված, այլընտրանք չունեցող ծանրակշիռ քայլեր: Սրանց նպատակը մեկն է՝ մեզանում արմատավորել և զարգացնել այն բոլոր ինստիտուտները և սկզբունքները, որոնք հատուկ են քաղաքացիական հասարակությանը:

Ստեղծված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով: Բարեփոխումներին նպատակառության աշխատանքներն իրականացվում են հիմնականում երեք ուղղություններով.

1. Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային վերափոխումներ,
2. Քաղաքացիական ծառայության ներդրում,
3. Ֆինանսական կառավարման բարեփոխումներ:

Նշված ուղղություններն, ըստ եռթյան, կազմում են համալիր մեկ միասնական համակարգի բաղկացուցիչ տարրերը: Նախապատրաստվել և քննարկումների փուլում է գտնվում պետական կառավարման համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը, որտեղ վեր հանված հիմախնդիրների լուծումը թույլ կտա օպտիմալացնել պետական կառավարման մարմինների գործունեությունը և բարձրացնել բյուջետային ծախսումների արդյունավետությունը: Օրակարգի հարց է դարձել կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացման անհրաժեշտությունը:

Յարկ եմ համարում առանձնահատուկ ընդգծել, որ կառավարությունը հակակոռուպցիոն պայքարը դիտարկել և դիտարկում է որպես պետության առջև ծառացած առանցքային հիմնահարցերից մեկը, ինչն իր արտացոլումն է գույն դեռևս մեկ տարի առաջ Ազգային ժողովի հավանության արժանացած կառավարության գործունեության ծրագրում: Երկրի քաղաքական դեկարտությունն այս բնագավառում դրսնորելու է քաղաքական կամք, ամենայն վճռականություն և անզիջողականություն:

Աշխարհաքաղաքական գործընթացներում մեր երկրի կողմնորոշումների ու դիրքորոշումների մասին՝ կուսակցության վերաբերյալ.

Ցավով եմ ասում. անկախության անցած տասը տարիների ընթացքում մենք այդպես ել չենք կարողացել թոթափել կայսրությունում ապրողի մտածելակերպը, որևէ մեծ տերության շվաքում գոյատևելու և մեր խնդիրները նրանց ձեռքերով լուծելու ու մեր բաժին պատասխանատվությունից խուսափելու արատավոր հոգեբանությունը:

Կողմնորոշման խնդիր՝ արևմտամետ, ուսւամետ, ամերիկամետ, ունենում են այն մարդիկ, այն ուժերը, որոնք չունեն իրենց սեփական դիրքորոշումը, սովոր են կուշտ ստրկության, ճահճում ապրողի գոհ ու բութ վիճակին, որի դեպքում կարևոր պատասխանատվություն չունենալու և կյանքից հաճույքներ քաղելը:

Յանրապետականը Երկրապահի հետ միացավ՝ հիմք ունենալով մեր ազգային մոտեցումն այս հարցում, այն է՝ մենք մեր հայկականի, դեպի Յայաստան օրիենտացիայի կողմնակիցն ենք: Այլ տերությունների, պետությունների հետ պատրաստ ենք համագործակցել՝ ենելով մեր ազգային ու պետական շահերից: Այս դեպքում միայն մեզ կիարգեն, մեզ հետ հաշվի կնստեն:

Նման դիրքորոշում մենք որդեգրել ենք և դարաբաղյան պատերազմի տարիներին, ունեցել ենք ձեռքբերումներ՝ ստեղծելով անվտանգության գոտիներ Արցախի և Յայաստանի համար:

Այս մոտեցումն ամենախին չի խանգարում Երկկողմանի և նաև բազմակողմ ռազմական,

քաղաքական, տնտեսական կապեր ունենալ: Մենք գտնում ենք, որ պետությունն այս հարցում վարում է հավասարակշռված քաղաքականություն հարևանների, Եվրախորհրդի, Եվրամիության, ՆԱՏՕ-ի հետ ու ԱՊՀ-ի շրջանակներում, իր մասնակցությունը բերելով և տարածաշրջանային, և Եվրոպական ծրագրերին:

Օրինակ, Ռուսաստանի ռազմական բազաների ներկայությունը Հայաստանում և ՆԱՏՕ-ի շրջանակներում «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցությունը, իրար չհակասող, հակառակ՝ փոխլրացնող գործոններ են: Այստեղ կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Իսկ մի հարցի շուրջ, ցանկանում եմ հատուկ հայտնել կուսակցության դիրքորոշումը: Խոսքը Հայաստան-Բելառուս միությանը Հայաստանի անդամակցության մասին է, որին կուսակցությունը կտրականապես դեմ է: Մենք գտնում ենք, որ երկկողմ հարաբերությունները Ռուսաստանի և Բելառուսի հետ զարգանում են բավարար չափով. սկսված է տնտեսական համագործակցության նոր փուլ, ԱՊՀ-ի և կուեկտիվ անվտանգության պայմանագրի շրջանակներում նույնագեն բազմակողմ խորը հարաբերություններ ունենք: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մեր հարևաններին, ապա մենք կողմնակից ենք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման առանց պայմանագրերի:

Կուսակցությունը ողջունում է միշազգային հանրության և պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ակտիվացող գործընթացը, որն արդյունք է նաև մեր սփյուռքահայ եղբայրների, մեր ժողովրդի բարեկամների կատարած ահօնելի աշխատանքի:

Այժմ անդրադառնամ բոլորիս անչափ հուզող Արցախի խնդրին: Այս հարցում Հանրապետական կուսակցությունը ունեցել է իր սկզբունքային դիրքորոշումը, որը ոչ մի փոփոխության չի ենթարկվել, սակայն, այսուամենայինվ, հարկ եմ համարում հիշեցնել այս:

- Արդրեշանին՝ Արցախի ենթակայության բացառում, Արցախի կարգավիճակի հստակեցում,
- Արցախի և Հայաստանի անվտանգության ապահովում,
- Հարցի կարգավորում բանակցությունների միջոցով՝ Միսսի խմբի համանախագահների և երկու պետությունների դեկավարների անմիշական շփումների միջոցով՝ որոշակի փուլում Արցախի իշխանությունների մասնակցությամբ,
- Հայաստանի տարածքային ամբողջականության խախտման հաշվին հակամարտության լուծման բացառում,
- Բանակցությունների ժամանակ իրեն պժմարտադրված պատերազմի արդյունքում հաղթանակած երկրի դիրքերից հանդես գալու անհրաժեշտություն:

Փարիզյան և Թիվեստյան հանդիպումներում Հայաստանը չի նահանջել այդ սկզբունքներից և հետագա բանակցություններում էլ, ըստ մեզ, դրանք պետք է պաշտպանվեն:

Այժմ մի քանի խոսք կուսակցության կազմակերպական հարցերի վերաբերյալ.

1999թ. Հանրապետական կուսակցության շարքերում ընդգրկված է մոտ 8.000 անդամ: Այսօր կուսակցությունն ունի 10 մարզային կառույց և 57 տարածքային կազմակերպություններ, Հայաստանի բոլոր մարզերում և քաղաքներում գործում են 500-ից ավելի սկզբնական կազմակերպություններ: Գործում է կուսակցության «Ցեղակրոն» երիտասարդական կազմակերպությունը, որն իր շարքերում ընդգրկել է հարյուրավոր ուսանողների և երիտասարդ մասնագետների՝ ակտիվորեն մասնակցելով երկրի երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին:

Ցույնեմբերի 27-ից հետո կուսակցությունում տեղի ունեցան մի քանի իրողություններ, որոնց կցանկանայի անդրադառնալ:

Գործադիր իշխանությունում պաշտոնավարող որոշ կուսակցականներ իրենց անձնական հավակնությունները ընդհանուր գործի շահերից վեր դասելու պատճառով տարածայնություններ ունեցան կուսակցության հետ, իսկ մի մասը, չցանկանալով այլևս քաղաքականությամբ գրադարձել, բայց մնալով համակիր, հեռացավ կուսակցությունից: Խորհրդի 4 անդամներ հեռացան Հանրապետականից՝ այլոց հետ ստեղծելով «Հանրապետություն» կուսակցությունը, և իրենց հետևից տարան մի քանի հարյուր հանրապետականների: Եթե

հանրագումարի բերենք, ապա պետք է նշենք, որ այս երկու տարիների ընթացքում կուսակցությունից հեռացել կամ հեռացվել են մոտ 800 հոգի:

Ինչպես ցանկացած կուսակցությունում, այնպես էլ Հանրապետականում, ընթանում են թնական զարգացումներ՝ անդամների մի մասը հեռանում է, գալիս են նորերը: Այս երկու տարում, հատկապես հոկտեմբերի 27-ից հետո, կուսակցություն է ընդունվել 1000-ից ավելի մարդ՝ հիմնականում մտավորականներ, ուսանողներ: Նրանք ընդունել են այն պարզ ճշմարտությունը, որ համախմբման և միասնության մեջ է մեր դժվարությունները հաղթահարելու գրավականը:

- Հանրապետական են կառավարության 9 անդամներ: Ունենք 6 փոխնախարար և 2 կոմիտեների ղեկավարներ, 4 մարզպետ, Երևանում՝ 4 համայնքապետ, 450-ից ավելի քաղաքապետ և համայնքապետ, 3000-ից ավելի ավագանու անդամներ:

Այս ամենը մեծ պատասխանատվություն է Հանրապետական կուսակցության համար: Մենք կամավոր կերպով վերցրել ենք ծանր բեռ և կառավարությունում, և տեղական ինքնակառավարման մարմիններում: Այն, որ կատարվել է հսկայական կուսակցական-կազմակերպչական աշխատանք՝ անուրանալի է, բայց, որ կան նաև թերություններ, չընդունել չենք կարող: Ամենամեծ բացթողումն այն է, որ կուսակցության կենտրոնի՝ խորհրդի կապը տարածքային կազմակերպությունների հետ թույլ է, մեր կուսակցիցները ժամանակին չեն տեղեկացվում որոշումների, դիրքորոշումների մասին: Կուսակցության ու կառավարության աշխատանքները տեղերում պատշաճ մակարդակով ներկայացնելու հարցում անբավարար է տվյալ տարածքներից ընտրված Հանրապետական պատգամավորների աշխատանքը: Շատ հաճախ դրանք ներկայացնում են այլ պատգամավորներ կամ քաղաքական ուժեր՝ դիտարկելով իրենց տեսանկյունից, այն դեպքում, երբ ձեր միջոցով են այդ հարցերը բարձացվել, կառավարության քննարկման ինսդիր դարձել:

Մինչհամագումարյան մեր հանդիպումների ժամանակ շատերու դժգոհել եք կուսակցական մամուլից: Ես նկատի ունեմ «ժամանակ» օրաթերթը, նրա պասսիվ կեցվածքը, որն այժմ փորձում ենք շտկե, ու նաև ուժեղացնել գաղափարական աշխատանքը:

Նման իրավիճակի պատճառը թերևս այն է, որ կուսակցության կարող ուժերը գրաղված են Ազգային ժողովում և կառավարությունում իրենց վստահված աշխատանքով, նաև այն, որ հաճախ չենք ձգուում ավելիին՝ բավարարվելով ձեռք բերվածով: Կուսակցության նորընտիր խորհրդի առաջնահերթ ինսդիրը հստակ ծրագրերի և կատարման ստույգ ժամկետներով միջոցառումների պլանի մշակումն է: Չնայած այն բանին, որ խորհրդարանում կարևոր ոչ մի նախաձեռնություն չի ընսարկվել և ընդունվել առանց Հանրապետական պատգամավորների, այնուհանդերձ, չեմ կարող չնշել, որ եղել են դեպքեր, երբ ավելորդ ինքնավատահության, գործընթացներն ինքնահոսի թողնելու կամ անտարբերության պատճառով քվեարկությունների ժամանակ անհարկի լարվածություններ են առաջացել: Պետք է գիտակցել, որ միայն խմբակցության ղեկավարի աշխատանքով ինարավոր չեն այս ինսդիրները լուծել: Բացակայությունները երբեմն հասնում են անթույլատրելի չափերի, նամանավանդ կարևորագույն հարցերը քննարկելիս կամ քվեարկության ժամանակ: Անհրաժեշտ ակտիվություն չի ցուցաբերվում մեզ համար ընդունելի օրինագծերի պաշտպանության հարցում, որից օգտվում են նախագծի հակառակորդները՝ նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը: Յուս ունեմ, որ ապագայում համատեղ ուժերով կվերացնենք այս բացթողումները՝ աշխատելով ավելի ակտիվ և նպատակամղված:

Հարգարժան հանրապետականներ: Ավարտելով իմ ցեկուցը, հույս եմ հայտնում, որ մեր կուսակցությունը այսուհետ ևս հավատարիմ կմնա ազգային հիմնարար գաղափարներին և, որպես քաղաքական ուժ, իր լուրջ ավանդը կներդնի մեր Հայրենիքի առաջընթացի և նորաստեղծ պետականության ամրապնդման գործում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Արձանագրելով, որ

- 1999-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում ստանձնել է քաղաքական պատասխանատվություն Երկրի ներկայի և ապագայի, իսկ կառավարություն կազմելով՝ նաև կառավարության վարած քաղաքականության համար,
- դեռևս հաղթահարված չէ Երկրում առկա քաղաքական, սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակը,
- հոկտեմբերի 27-ի ոճրագործության արդյունքում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը շարունակվում է ջլատիչ ազդեցություն ունենալ հասարակության վրա,
- կոռուպցիան, տարբեր ուժերի կողմից հասարակության մեջ խորացվող ատելությունը միմյանց ու անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ, սպառնալիք են պետականության գոյության համար,
- վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքական իրավիճակի նկատելի կայունացման շնորհիվ 2001 թվականին սոցիալ-տնտեսական ոլորտում նկատվում են դրական տեղաշարժեր,
- Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությամբ հաստատվել են նոր հարաբերություններ միշագգային հանրության հետ,
- 1915թ. Ցեղասպանության միշագգային ճանաչման գործում ձեռք է բերվել ակնհայտ առաջընթաց,

Կրկին հավաստելով իր հավատարմությունը նժդեհյան գաղափարախոսության ու դավանած արժեքներին, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը միանգամայն իրական է համարում «Միասնություն» դաշինքի և կառավարության գործունեության ծրագրերի լիակատար իրագործումը, ինչի համար անհրաժեշտ է ապահովել

- պետական կառավարման համակարգի արմատական բարեփոխումների իրականացում՝ Սահմանադրական և համապատասխան օրենսդրական փաթեթի ընդունմամբ,
- քաղաքական կայունության ամրապնդում, լիարժեք քաղաքական համակարգի ծևավորում՝ գաղափարական ու ծրագրային հենքի վրա,
- իշխանության բոլոր օղակների ներդաշնակ գործունեություն,
- հավատարմություն Ղարաբաղյան խնդրի կարգավորման հիմնական սկզբունքներին (Աղոթեշանին ԼՂՀ Ենթակայության բացառում, ՀՀ-ԼՂՀ ընդհանուր սահման, լիակատար անվտանգություն ապահովող ԼՂՀ սահմանների ամրագրում, ՀՀ տարածքային ամրողականության անձեռնմխելիություն),
- հոկտեմբերի 27-ի դատավարության արդար և շահարկումներից գերծ ընթացք, ոճրագործների անվերապահ արժանի պատիժ,
- կոռուպցիայի դեմ վճռական և հետևողական պայքար, հասարակության սոցիալական բներացման թուլացում, միշին խափի ծևավորում՝ փոքր և միշին ձեռներեցության խթանմամբ, ներդրումների համար բարեևաստ միշավայրի զարգացմամբ:

Մենք հավատում ենք մեր ուժերին, մեր աշխարհասկիյուր ժողովրդին ու մեր Երկրի ապագային: Քսանմեկերորդ դարը մերն է լինելու:

Առաջարկվեց ՀՀԿ խորհրդի թվակազմը թողնել Նույնը՝ 25 հոգի: Խորհրդի թվակազմը հաստատվեց միաձայն: ՀՀԿ նորընտիր խորհրդի նիստում խորհրդի նախագահ առաջադրվեց Անդրանիկ Մարգարյանը:

Ա. Մարգարյանը կարճատև ելույթ ունեցավ և հայտնեց, որ խորհրդին ընտրել է նաև Տիգրան Թորոսյանին և Ռազմիկ Զոհրաբյանին՝ որպես ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալներ:

Ա. Մարգարյանը նաև հայտնեց, որ ՀՀԿ խորհրդի որոշմամբ ՀՀԿ խորհրդի պատվավոր անդամներ են հայտարարվել Աշոտ Նավասարդյանը, Վազգեն Սարգսյանը, Յուրի Բախչյանը, Վահան Զատիկյանը:

Յարակից ելույթներով հանդես եկան ՀՀԿ խորհրդի անդամ Գագիկ Մինասյանը, Արարատի Մարգիստրիդի նախագահ Լեռնիկ Ալեքսանյանը, ՀՀԿ խորհրդի անդամ Մկրտիչ Մկրտչյանը, ՀՀԿ խորհրդի անդամ Արարատ Մալիխասյանը, Աժ պատգամավոր Գագիկ Խաչատրյանը, Տավուշի մարգիստրիդի նախագահ Արմեն Ղուլարյանը, ՀՀԿ խորհրդի անդամ Ֆիրդուս Զաքարյանը, Աժ պատգամավոր Սուրեն Ավետիսյանը, ՀՀԿ «Ցեղակրոն» երիտասարդական կազմակերպության նախագահ Վազգեն Խաչիկյանը, Գորիսի տարածքային կազմակերպությունից՝ Վարդան Սարգսյանը:



ՀՀԿ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Կուսակցության 6-րդ համագումարը հրավիրվել է, ըստ Էության, մեզ համար ամենավճռորոշ պահին: Ոչ միայն այն պատճառով, որ մենք անցել ենք 1999թ. խորհրդարանական ընտրություններում ստացած լիազորությունները իրացնելու և մեր ծրագրերն իրագործելու ժամանակաշրջանի կեսը և, բնականաբար, այսօր անհրաժեշտ է վերլուծել այն, ինչ արել ենք, կարողացել ենք անել, այն ինչ չի հաջողվել, նաև՝ ինչո՞ւ չի հաջողվել:

Անցած երկու տարին մեզ համար գուտ թվաբանական բաժանման խնդիր չէ: Անցած ժամանակաշրջանում կրեցինք ծանր հարվածներ: Ավելին, եթե մենք հիշենք, որ 1997թ. կորցրել ենք կուսակցության հիմնադրին՝ Աշոտ Նավասարդյանին, և դրանից հետո, երբ կուսակցությունը կամաց-կամաց վերագտնում էր իրեն, այդ ժամանակ սկսվեց մի նոր ճանապարհ՝ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ սկսվեց կուսակցության վերածնողի գործը, շատ հույսեր արթնացան՝ մեծ ծրագրերի իրագործման հույսեր արթնացան: Դժբախտաբար, մենք կարողացանք միայն առաջին քայլերն անել, առաջին քայլերը այն մեծ ծրագրի, որ միայն Յանրապետական կուսակցությանը չէր վերաբերվում:

Անկախության տարիների ողջ ընթացքի մեջ առաջին անգամ լիովին գիտակցվեցին սխալները՝ մարդկային, նյութական կարողությունների փոշիացման արդյունքները: Եվ Վազգեն Սարգսյանն առաջարկեց գլխավոր գաղափարը՝ միաբանության գաղափարը, ուժերի հանրագումարի գաղափարը: 1998-ին սկսվեց այն. Երկրապահ կամավորականների միության քաղաքականությամբ զբաղվող հատվածի և շատ ու շատ այլ մարդկանց, որոնք խանդավառված սկսված գործընթացներով, փորձեցին իրենց աշակցությունը ցուցաբերել առաջարկած ծրագրերին: Դժբախտաբար հոկտեմբերի 27-ին մենք ստացանք երկորորդ ծանր հարվածը. մենք կորցրեցինք կուսակցության նորօրյա առաջնորդին, վերածնողի գաղափարն առաջնորդող Վազգեն Սարգսյանին, կորցրեցինք մեր խորհրդի լավագույն ընկերներին՝ Յուրի Բախչյանին, Վահան Զատիկյանին, և այդ իրավիճակում հայտնված կուսակցությունը պետք է ուժ գտներ շարունակելու այն գաղափարների իրագործումը, որոնք առաջարկվել եին: Դետագան ցույց տվեց, որ Յանրապետական կուսակցությունը հավատարիմ եղավ այն գաղափարներին, որոնք առաջարկվել եին 1998թ.-ից սկսած, որովհետև մենք իսկապես գիտակցում եինք, որ այդ գաղափարների իրագործումը վերաբերվում է ոչ միայն մեր կուսակցությանը, այլ նաև մեր ժողովրդին, մեր երկին, քանզի դա այն հույսն էր, որ արթնացել էր 1998-ի վերածնողի գործընթացով:

Կարծում եմ, որ հոկտեմբերի 27-ից հետո, երբ վարչապետ առաջարկվեց Ա. Սարգսյանը, և ավելի ուշ, երբ մայիսին վարչապետ առաջարկվեց Ա. Սարգսյանը, մենք հավատարիմ մնացինք այն մոտեցումներին, այն սկզբունքներին, որոնք դրել եր Վ. Սարգսյանը: Դիշեցնեմ, որ 1999թ-ի հունվարի վերջին, կուսակցության V-րդ համագումարում, Վազգեն Սարգսյանի արտասանած ճառը, որը ծրագրային էր ոչ միայն կուսակցության համար, այլ նաև ընդհանրապես մեր երկին քաղաքական ասպարեզի համար, և նաև դրան հաջորդած 1999թ-ի ընտրություններից հետո կատարված առաջին քայլերը հենց այդպիսին եին, ինչպիսին եղան հետագայում Յանրապետական կուսակցության քայլերը:

Ըստ եռթյան, մեծամասնություն ստացած քաղաքական ուժն ընդամենք ուներ երկու ճանապարհ՝ կամ սկզբունքային հարցերում հանրապետության նախագահի հետ արձանագրել լիակատար միակամություն և փորձել ձևավորել ուժեղ իշխանություն, կամ թողնել կառավարությունը ծնավորելու հանրապետության նախագահին և Ազգային Ժողովում փորձել ինչ-ինչ ճշգրտումներ անել: Բնական է, մեր վիճակում գտնվող երկրի համար միակ տարբերակը առաջին ճանապարհն էր:

Յանրապետական կուսակցությունն այս մոտեցումներից երբեք հետ չի կանգնել: Այդ մոտեցումներն եին հիմքը այն որոշման, որ մայիսին, ինչքան էլ որ մեզ համար բարոյահոգերանական առումով բարդ էր համակերպվել Արամ Սարգսյանի պաշտոնանկության հետ, այնուամենայնիվ, մենք համարեցինք, որ պիտի ապահովենք շարունակականությունը այն գաղափարների, որոնք դրվել եին 1998թ-ի գարնանից սկսած և որով սկսեցին իրագործվել 1999թ-ի ամանից:

Եվ մենք առաջարկեցինք պարոն Մարգարյանի թեկնածությունը վարչապետի պաշտոնում: Անշուշտ, բոլորիս հայտնի են այն գնահատականները, որոնք ինչում եին: Կյանքը ցույց տվեց, որ թեև կուսակցությունը ստանձնել էր չափազանց ծանր պատասխանատվություն, սակայն համոզված եմ, իիմնահարցերում մենք պատվով ենք դուրս եկել: Դա ցույց տվեց նաև 1999թ-ի ամբողջ ամառը, երբ ամենածանր հարվածը ստացանք նրանից, ումից սպասում եինք ամենամեծ աջակցությունը: Ըստ եռթյան, ՀՀԿ-ն մենակ մնաց և՝ կառավարության պատասխանատվությունը կրելու, և՝ երկրի առաջև ծառացած բարդ ու ծանր խնդիրների

լուծման հարցերում: Շատ լավ հիշում ենք, մի քանի շաբաթ առաջ, երբ Ազգային Ժողովում քննարկվում էր 2000թ-ի բյուջեի հաշվետվությունը, որոշ ուժեր, «Միամտաբար», Միամիտ կեցվածք ընդունելով հարց էին տալիս. «Ու՞ր գնացին այդ փողերը: Ինչո՞ւ չկատարվեց բյուջեն»: Ուժեր, որոնք նաև պայքարում էին ամռանը, որ այդ փողերը չինեին այդ բյուջեում, ուժեր, որ պիտի ապահովեին այդ փողերի մուտքը, այս միջոցառումների համար, որ քվեարկել էին և՝ Արամ Սարգսյանի կառավարության գործունեության ծրագրի քննարկման ժամանակ, և՝ Անդրանիկ Մարգարյանի կառավարության գործունեության ծրագրի քննարկման ժամանակ: Ինչ-ինչ քայլեր անելուց պետք է հիշել, թե երեկ ինչ էին անում ու ասում և պետք է հիշել, որ վաղն Էլ անելիք կա: Այդ ամենն ի վերջո պիտի լինեին միմյանց տրամաբանական շարունակությունը: Ինչու, կարծում եմ, պարոն Մարգարյանի կառավարության գործունեության ծրագիրը նաև տրամաբանական շարունակությունն էր այն կառավարության գործունեության ծրագրի, որը ձևավորեց Վազգեն Սարգսյանը: Ավելին ասեմ, այդ ծրագրի գարգացումներն այսպիսին էին, որոնք 1999թ-ի ընտրություններից հետո, կառավարության ձևավորումից հետո մի քանի ամսվա ընթացքում սրընթաց առաջադրվում էին Վազգեն Սարգսյանի կողմից:

Հիշեցնեմ, որ երկու հիմնական գաղափար արձանագրվեց կառավարության գործունեության ծրագրում՝

1. Տևական բարեփոխումները տեղափոխել իրական դաշտ,
2. Պետական կառավարման համակարգի արմատական բարեփոխումներ, մասնավորապես կոռոպցիայի դեմ պայքարը:

Սրանք այն գաղափարներն էին, որոնց սերմերը ցանել էր հենց Վազգեն Սարգսյանը: Սա այն գործունեության ծրագիրն էր, որը շահեկանորեն տարբերվեց նախորդ՝ անկախության ժամանակաշրջանի կառավարությունների գործունեությունների ծրագրերից: Կոնկրետ թվային տվյալներով, թե ինչ ենք նախատեսում առաջիկա երեք տարիների ընթացքում: Հիշեցնեմ դրանք՝ 8-10% համախառն ներքին արդյունքի աճ, 25% արտահանման աճ և 3 տարիների ընթացքում բյուջետային աշխատողների աշխատավարձերի կրկնապատկում: Առաջին երկուսը 2001թ-ի առաջին չորս ամիսների ընթացքում ակնհայտ է, որ կատարվում է. արտահանման աճը գերազանցում է 25%-ը և համախառն ներքին արդյունքի աճն ավելի է, քան 10%-ը:

Իհարկե, կաև բազմաթիվ սխալներ, թերություններ, բայց համոզված եմ, եթե հետևողական լինենք, շարունակենք թիկունք լինել կառավարությանը՝ վաղապետի գլխավորությամբ, եթե ապահովենք, մասնավորապես, Ազգային Ժողովում աշխատանքը, բավարար աշխատանք տանենք տարածքային կազմակերպություններում, ապա իրականություն կդառնա և՝ աշխատավարձերի, և՝ թոշակների ու նպաստների կրկնապատկումը:

Վերադառնաք քաղաքական ասպարեզ՝ 2002թ. ակնհայտ դարձավ, որ քաղաքական համակարգը, քաղաքական կազմակերպությունները դեռևս լիարժեք ձևավորված չեն: Սա անպայմանորեն պետք է արձանագրենք, ինչքան էլ ցավալի է: Մեր շատ դժբախտությունները դրանից են գալիս, սկզբում գաղափարախոսություն, ծրագիր, կարծես թե սրանք կիրառելի չեն քաղաքականության ասպարեզում: Ակնհայտորեն տեսանք այդ սկզբունքների ուժնահարումը մեր ընկերների կողմից: Տեսանք նաև այլ քաղաքական ուժերի կողմից:

Բոլորովին ել Հանրապետական կուսակցությունը ակնկալիքներ չուներ, թե բոլորը պետք է պաշտպանեն ՀՀԿ-ի սկզբունքներն ու մոտեցումները, քավ լիցի, մենք արդեն մեկ տասնամյակ են, ինչ հաղթահարել ենք նախկին քաղաքական համակարգի կապանքները: Գոնե յուրաքանչյուր կուսակցություն իր գաղափարներին, իր ծրագրերին պիտի հավատարիմ լինի, իր արած հայտարարություններին: Արժե նշել, որ շատ հաճախ դրանք ել չկան: Ինչ խոսք, այս առումով մենք շատ ավելի շահեկան վիճակում ենք, անցել ենք մեկ տասնամյակի ճանապարհ: Մեր ընկերները, որոնք հիմնադրեցին ՀՀԿ-ն, երեք տասնամյակի ճանապարհ և փորձառություն ունեին և հստակ ընդգծված գաղափարախոսություն և ծրագիր: Այդ ամենը միևնուն ստացավ կուսակցության ծրագրում, գաղափարախոսության մեջ: Այսօր, քիչ թե շատ տեղյակ մարդու համար ակնհայտ է, որ ՀՀԿ-ի հիմքում Նժդեհյան գաղափարախոսությունն է,

պահպանողական մի գաղափարախոսություն, որի համար գերազույն արժեքներն են՝ պետության ազատությունը, անկախությունը, ազգի ազատությունը, անհատի ազատությունն ու արժանապատվությունը, որի համար սրբություն են ազգն ու հայրենիքը, ընտանիքը, լեզուն, պատմությունը:

Բնականաբար, մեզ համար կարևոր արժեքներից են նաև տնտեսության ազատությունը, ոչ գաղափարազուրկ տնտեսական ազատությունը, որին մենք ականատես ենք եղել անկախության տարիներին: Այն պետք է ունենա նպատակ, հատուկ ընդգծված ուղենիշներ: ՀՀԿ-ի խորհրդի վերջին նիստում մենք որոշել ենք, որ առաջիկա երկու-երեք ամիսների ընթացքում մշակենք կուսակցության առաջիկա երկու-երեք տարիների համար գործունեության հատուկ ծրագիր: Այն կներկայացվի տարածքային կազմակերպություններին, կընսարկվի և, կարծում եմ, ել ավելի հստակ կլինեն մոտեցումներն ու սկզբունքները, և այն մեզ կօգնի, որ կոնկրետ գործերով կարողանանք իրագործել այն ծրագրերը, որոնք առաջադրվել են 1999թ. ընտրությունների ժամանակ:

Քաղաքական համակարգի, քաղաքական կուսակցությունների անկատարությունը ինքնարերաբար չի առաջացել և այստեղ, չեմ կարծում, որ պետք է մենք մեղադրենք միայն կուսակցություններին: Դայտնի է, որ կուսակցությունների զարգացման համար համապատասխան պայմաններ անկախության առաջին տարիներին չեն ստեղծվել: Ճիշտ հակառակը, ամեն ինչ վերածվել է խմբակային կառավարման, թվում եր, թե ընտրել ենք բոլորովին այլ համակարգ: Այն ինչ ճանապարհով մենք հայտարարել ենք, որ գնում ենք, ենթադրում եր մի պարզ բան, երկրի ղեկավարման գլխավոր դերակատարությունը պետք է ունենան կուսակցությունները: Շատ հաճախ, ցավոք սրտի, կուսակցությունները միայն շղարշ են եղել ինչ-որ մարդկանց ու խմբերի համար, և արդյունքներն ել ակնհայտ են: Այդ առումով մենք չափազանց կարևորում ենք քաղաքական համակարգի բարեփոխումները: Շուտով, հուլիսի կեսերին մյուս կուսակցություններին կներկայացվեն Սահմանադրական փոփոխությունների փաթեթը, որտեղ փոփոխություններ են առաջարկվում և՝ Ազգային ժողովի դերի բարձրացման առումով, և՝ Նախագահ-Կառավարություն-Ազգային ժողով հարաբերությունների հստակեցման առումով, և՝ կառավարության լիազորությունների մեծացման առումով:

Թեև, առաջին հայացքից կարող են այդ փոփոխությունները խորապես չընկալվել, սակայն չափազանց կարևոր գաղափարներ են դրված այդ փոփոխություններում: Եականորեն փոփոխվում է տեղական ինքնակառավարման բաժինը: Երևանի կարգավիճակի վերաբերյալ կտրուկ, արմատական փոփոխությունների, առաջարկությունների բաժիններ կան:

Բնական է, որ միայն երկրի գլխավոր օրենքով այդ փոփոխությունները չեն ամբողջացնի: Նախատեսված է նաև պետական կառավարման համակարգի օրենքի փոփոխությունների փաթեթ, որը մինչև տարեվերջ մենք պետք է քննարկենք և ընդունենք: Այդ օրենքների նախագծերն արդեն մշակված են, մեզ մնում է վերջնական փուլ անցնել: Այս շարքում է «Կուսակցությունների մասին» օրենքը՝ չափազանց կարևոր մի օրենք կուսակցությունների կայացման համար, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը, «Ընտրական օրենսգրքի» փոփոխությունների փաթեթը, «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքը:

Իրականում, եթե իիշենք, թե կուսակցություններն ինչ փոփոխությունների մասին են խոսում 1998, 1999թթ. - ի նախօրյակին, ակնհայտ կդառնա, որ դրանք հենց այն հարցականներն են, որոնք մենք առաջադրել ենք այս ընթացքում:

Առանց քաղաքական համակարգի լուրջ փոփոխությունների, առանց կուսակցությունների տարածման համար լուրջ իմմեր ստեղծելու, դժվար է ակնկալել նաև տնտեսության մեջ արմատական փոփոխություններ: Ցավոք, չգիտակցվեց դրա կարևորությունը անկախության առաջին տարիներին: Այդ տարիներին եին, որ առավել արդյունավետ պիտի լինեին այդ բարեփոխումները, որովհետև քանդվում եր իին, բյուրոկրատական ապարատը, և նորն եր ձևավորվում: Ակնհայտ է, որ նոր ձևավորված դեմոկրատական ապարատը փոխելը շատ դժվար է: Այն իրենից ներկայացնում է իրար հետ շահերով կապված տասնյակ ու հարյուրավոր մարդկանց խումբ, մարդիկ, որոնք առաջին

Են խոչընդոտելու այդ փոփոխություններին: Այս համակարգում փոփոխությունների համար իշխանություններից պահանջվում է քաղաքական կամք, հետևողականություն և օրինականություն բոլորի համար և ամեն դեպքում: Սա է այն հիմքը, որի արդյունքում մենք կհաջողենք այդ բարեփոխումներն իրագործել: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ շատ հաճախ մարդիկ պետական ծառայության են գնում մի մտքով, որ դա պետք է դառնա իրենց համար եկամտի աղբյուր, ոչ՝ աշխատավարձը, բնականաբար, կաշառքը, հովանավորչությունը և այլն: Չափազանց տարածված մի երևույթ, որ այսօր խեղում է մեր երկիրը: Հաճախ պետական կառավարման համակարգի բարեփոխումներին որպես գլխավոր խոչընդուն մատնանշում են ֆինանսական միջոցների բացակայությունը բյուջեում, մինչդեռ երկրում կան բավարար ֆինանսական միջոցներ: Դրանք կարող են գտնել՝ շատ հաճախ կրճատելով ֆունկցիաները, ոչ մարդկանց (մարդկանց, երբ կրճատում են, հետագայում նոր կադրերի պահանջ է առաջանում), օրինական հարթությունը բերելով այն բոլոր ֆինանսական միջոցները, որոնք բոլորին աչքի առաջ են և բոլորս շատ լավ գիտենք: Այստեղ, իհարկե, Զաղաքացիական ծառայության մասին օրենքը չափազանց մեծ նշանակություն ունի:

Ոչ պակաս կարևոր է կոռուպցիայի դեմ լիարժեք պայքարը: Ես մեկ անգամ եմ եմ կրկնում, այո, այսօր կոռուպցիան մեր պետական համակարգում տարածված է: Բնականաբար, պետական ծառայության մեջ եղած մարդկանց պետք է ապահովել արժանապատիկ աշխատավարձով: Սա աներկրա է, բայց հաճախ այդ մասին խոսելիս մատնանշում են այն խղճուկ աշխատավարձն ու թոշակները, որոնք երկրում գոյություն ունեն: Համեմատելուց ստացվում է, որ կարծես թե որևէ ասելիք չկա, որովհետև 10,20,30 անգամ, պետական ծառայության տարբեր պաշտոններում մարդիկ ավելի բարձր աշխատավարձ են ստանում: Բայց 5,10 հազար դրամի թոշակն ու աշխատավարձը հենց այն պատճառով է 5:10 հազար դրամի հավասար, որովհետև պետական ծառայողի աշխատավարձները ցածր են, որովհետև բյուրոկրատական ապարատը աշխատում է մեկ խնդրի վրա՝ դուրս բերել օրինական հարթությունից ֆինանսական հոսքերը, գտնել կողմնակի եկամուտներ, որովհետև կա մեկ պարզ տրամաբանություն՝ այդ մարդիկ մտածում են, որ իրենք վաղը, մյուս օրը այդ պաշտոնում չեն լինելու և իրենց վաղվա օրը ապահոված չի լինելու:

Անշուշտ, սա չափազանց բարդ խնդիր է, չափազանց բարդ է լինելու նաև պայքարը: Իհարկե, կարող են հարցեր ինչել. Եթե ակնհայտորեն այդքան պարզ են խնդիրները, եթե պարզ են խոցերը, որոնք գոյություն ունեն երկրի մարմնի վրա, ինչոր արագործն չեն բուժվում այդ խոցերը: Արմատական փոփոխություններ են պետք օրենքներում և Սահմանադրությունում, լուրջ և տևական պայքար է պետք դրա համար:

Ցավոք սրտի, կան մարդիկ, որոնք ամբողջ կյանքը թալանով են զբաղված, եղել և այսօր խոսում են կոռուպցիայի դեմ պայքարի հարցում կառավարության դիրքորոշման մասին և մարդկանց նաև խաբում են, մատնանշելով, որ միայն կառավարությունն է այդ գործում ներգրավված: Այդտեղ ներգրավված է և Ազգային Ժողովը, և այլ կերպ չեր կարող լինել: Մենք ունենք մի չափազանց կարևոր խնդիր, որը անցած երկու տարիներին շատ հաճախ աչքաթող ենք արել: Սա մեր գլխավոր թերությունն է: Աշխատանքը տարածքային կազմակերպությունների հետ չափազանց թույլ է: Ակտիվ կապը կուսակցության տարածքային կազմակերպությունների հետ մեզ հնարավորություն կտա տեղյակ լինելու առկա կոնկրետ խնդիրներին:

Մենք ունենք մեկ ճանապարհ. հզորացնել կուսակցությունները, քանի որ երկրի ապագան նրանցն է:

Հաջորդ հարցը վերաբերվում է երիտասարդական կազմակերպությանը: Մեր կուսակցության երիտասարդական կազմակերպությունում որոշ առաջընթացներ կան: Այն համալրվել է, և կապեր են հաստատվել եվրոպական մի շարք կառույցների հետ:

Սրանք են այն հիմնական խնդիրները, բացերը, որոնք մենք չենք հասցրել լուծել, բայց առշնուրում երկու տարի կա: Մենք վճռական ենք. այս գաղափարախոսությունը, սկզբունքները, որոնք մենք կրում ենք, շարունակելու ենք կրել: Այսօր մեր երկրի ապագան մեզանից է կախված: Մենք պատասխանատվությունից չենք խուսափում:

Ծնորհակալություն:

ՀՀԿ 6-ՐԴ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՀՀԿ ԽՈՐՃՐԴԻ ԱՆԴԱՄ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ



Կուսակցության 5-րդ համագումարից հետո ընկած ժամանակը բարդ ու պատասխանատու էր ազգի և պետության համար:

1999թ.-ի գարնանից սկսած արդեն ակնհայտ էր, որ ընտրություններում հաղթանակ է տանելու մի նոր ուժ, որը ոչ միայն նոր է իր մասնակիցների առումով, այլև նոր է իր բովանդակությամբ: Նորացված Հանրապետական կուսակցությունը և Ժողովրդական կուսակցությունը կազմեցին «Միասնություն» դաշինք և ապահովեցին հաղթանակ խորհրդարանական

ընտրություններում, որի նմանը չունեինք Հայաստանի Հանրապետության երեք հանրապետությունների ընթացքում: Բոլորն անխտիր, թե՛ միջազգային դիտորդները, թե՛ ընդդիմադիրները, թե՛ քաղաքական գործիչները արձանագրում էին, որ այդ ընտրությունները մեր նոր իրականության մեջ աննախադեպ էին իրենց թափանցիկության և արդարության առումով:

Սկիզբ դրվեց մի քաղաքական գործընթացի, որն իր գարգացման շրջանում պետք է բերեր այն քաղձալի իրավիճակին, երբ ժողովուրդը, ազգը պիտի հավատար իշխանություններին, որը ծևավորվում է իր միջոցով: Այդ ժամանակվա ընթացքում թե՛ ԱԺ-ն, թե՛ կառավարությունը այդ հույսերը սերմանեցին ժողովրդի լայն զանգվածներում: Եվ համոզված եմ, որ եթե չինսեին հոկտեմբերի 27-ի իրադարձությունները ԱԺ-ի դահլիճում, պատկերն այսօր այլ կիևներ: Սակայն ոճրագործները այլ բան էին կանխատեսել, և հոկտեմբերի 27-ը ստեղծեց մի իրավիճակ, երբ գործնականում քաղաքական ինտրիգների ոռջ պատասխանատվությունը ընկավ հենց մեր կուսակցության վրա:

Ես համոզված եմ, որ մեր պատմաքանները տարիներ հետո կարծանագրեն, թե ինչպիսի բարդ քաղաքական գործընթացներ է ապրել Հանրապետական կուսակցությունը իր դեկավարի հետ, թե ինչպիսի բարդ և նուրբ քաղաքական հաշվարկներով հնարավոր դարձավ մեր երկիրը հեռու պահել անկանխատեսելի զարգացումների հորդանուտից:

Ինչեւ, հոկտեմբերի 27-ից հետո ընկած վեց ամիսների ընթացքում, չնայած մեզ չհաջողվեց տնտեսության մեջ հասնել որևէ գործնական հաջողության, սակայն հաջողվեց շատ ավելի կարևորը:

Ա.Մարգարյանի դեկավարած կառավարությունը կարողացավ երկիրը գերծ պահել շատ անկանխատեսելի զարգացումներից:

Կառավարությունը վստահվեց մեր կուսակցության դեկավարին՝ Ա.Մարգարյանին: Նա ժառանգեց քավականին բարդ տնտեսական ցուցանիշներով մի իրավիճակ:

Սա է այն կարևորագույնը, որ դրված է կառավարության առջև իրագործելու:

Այսօր կան ցուցանիշներ, որոնք մեզ գոհացնում են: Դրանք չեն կարող գոհացնեցին լինել մեր բոլորի համար, սակայն պետք է հասկանալ, որ հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո ավելի մեծ ակնկալիքներ դժվար էր ունենալ:

Կաղուց էր խոսվում սահմանամերձ շրջանների նկատմամբ հատուկ պետական վերաբերմունքի մասին: Նոր կառավարությունը, որ դեկավարվում է հանրապետականների կողմից և ԱԺ-ն, ուր հանրապետականները ունեն ծայների վճռորոշ դերակատարություն, կարողացան իրականացնել այդ հարցի լուծումը: Եվ խորացնելով այս աշխատանքը, մենք վստահություն ձեռք կբերենք մեր հասարակության կողմից:

Բավականին արդյունաբեր և արգասաբեր է դարձել օրենսդիր և գործադիր իշխանությունների համագործակցությունը: Անցած տարեվերջին ընդունվեց հարկային բարեփոխումների փաթեթը, Յողային օրենսգիրքը, «Ներքին շուկայի մասին» օրենքը: Սրանք օրենսդրական նախաձեռնություններ են, որոնք կյանք մտնելով եապես կբարելավեն տնտեսության իրավիճակը: Նորից ուզում եմ նշել, որ բավականին բարդ է այս ժամանակաշրջանը մեզ համար:

Յուսով եմ, որ ապագան ավելի լավ է լինելու:

Ծնորհակալություն:

ԳԱԼՈՒՏ ՍԱՐԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀԿ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Զաղաքական գործընթացների վերլուծությունը վերջին երկու տարիների և դրանց գնահատականները անպայմանորեն կարևորելու են մեր պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացումների հետագա ուղիները:

«Միասնություն» դաշինքի ամբողջ գաղափարախոսությունը և դրա հիման վրա շրջանառության մեջ եղած ծրագրերը ելնում են երկրի կայունության, տնտեսության համընթաց ազատականացման, քաղաքական համաձայնեցված փոխըմբռնումների մոտեցումներից:

Ըստ իս, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մինչև օրս իր որդեգրած գաղափարներից և սկզբունքներից երբևէ չի հեռացել, ինչպես երբեմ-երբեմ փորձում են հասարակությանը հակառակ մատուցել իշխանամոլուցքով ախտորոշված քաղաքական ուժերը կամ գործիչները:

Որպես ըմբռնում, Հանրապետականը իր գործունեությամբ ընթացս չի առաջնորդվում: Նրա քաղաքական տրամաբանությունը իր ակունքներն ունի և աշխարհայացքն ուղղակիորեն սնվում է ազգի և պետության հավիտենականության գաղափարախոսությունից, որը ձևավորել է մերժամանակյա դիրքորոշումը՝ ամրապնդել հայոց պետականությանը: Այդ մասին ավելի ամբողջական խոսվեց նախորդ գեկուցումներում:

Հաշվետու ժամանակաշրջանում բավականին տարամերժ գնահատականներ են տրվել դաշինքի գաղափարախոսության, ծրագրերի և գործունեության վերաբերյալ: Սկզբնական խանդավառությունը փոխարինվեց իրար հաջորդող իրողությունների տրամաբանական, և, ինչու չե, նաև անտրամաբանական վերլուծություններով:

Կիզակետում հայտնվեց «Միասնություն» դաշինքի համանուն ԱԺ խմբակցությունը, որը շատ բնական ենք համարում: Այսօր ել դաշինքի գործունեությունը բնութագրվում է խմբակցության պահվածքով:

Որքան ել մերժելի համարենք դաշինքի փլուզումը, պետք է արձանագրենք՝ պրոբեմներ կան, և այնքան պրոբեմները չեն վտանգավոր, որքան որ դրանց հետևանքները: Այսօր ցանկացած քաղաքական ուժ այս կամ այն չափով իր խնդիրն է համարում օգտվել իրավիճակից: Կան նաև քաղաքական գործիչներ, երբեմ ել ուժեր, որոնք իրենց արդեն իսկ աղավաղված դիմագիծը հասարակությանը ներկայացնելու համար շանք չեն խնայում դիմակավորելու:

Նման իրողությունները այնքան վտանգավոր չեն լինի, եթե վերաբերվեին միայն մեզ, ավելին, դրանք հակված են անընդհատ լարվածություններ ստեղծել պետության շրջանակներում, ավելին, օրավոր ցեցոտում են մթնոլորտը: «Միասնություն» խմբակցության ներսում ցանկացած անհամաձայնություն ուղղակիորեն զգալի է դարձնում դրա հետևանքները: Առավել ևս դաշինքի շրեթիությունը, մեր համոզմամբ, անսախատեսելի հետևանքներ կունենա և, միգուցե, ճակատագրական:

Իրողությունների գնահատման, կարծում եմ, հարկ էլ չկա, քանի որ այդ գնահատականները տրվել են թե ՀՀԿ խորհրդում, և թե կուսակցության քաղաքական գործիչների կողմից:

Սակայն որոշ վերլուծականներ, բնականաբար, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ներկայացնող ԱԺ պատգամավորների գործունեության

մասին:

Պատգամավորներից 26-ը «Միասնություն» խմբակցությունից են, և 7-ը՝ այլ խմբերից:

«Միասնությունը» ներկայացնող հանրապետականների գործունեությունը հիմնականում կանոնակարգված է և լրիվությամբ արտահայտում է ՀՀԿ-ի քաղաքական մեկնությունը: Այլ խմբերում ընդգրկված հանրապետականները կարծես թե հանդես են գալիս կամ ինքնուրույնաբար, կամ քննարկումների արդյունքով: Միանգամից արձագանքենք, որ նման երևույթը անբնական է: Ընդգծենք, առանձնապես «Հայաստան» խումբը ձևավորվեց հանրապետականներով: Առավել ևս խումբը ընդդիմադիր կեցվածք դրսւորեց մեր նկատմամբ: Մեզ թվում է, որ այս իրողությանը դեռևս մեկը գնահատական չենք տվել:

Թերևս, եթե ժամանակին եզրահանգումներ կատարեինք, հետագայում «Հանրապետություն» կուսակցության ձևավորման պրոցեսում մեր նկատմամբ, մեղմ ասած, իրական իմբերից գուրկ անտրամաբանական գնահատականներ չեն ինչ:

Փորձը ցույց է տալիս, որ երբ խորհրդարանում ներկայացված հանրապետականները միակամ են հանդես գալիս՝ ցանկացած խնդիր, որոշում, օրենքը թե քննարկումների ընթացքում, և թե ընդունման առումով եզրափակվում են արդյունքներով: Առանձնապես այդ խնդիրն նպաստում են խորհրդարանական հանրապետականների և ՀՀԿ քաղաքական խորհրդի համատեղ քննարկումները, ընդհանրապես կարևոր է քաղաքական խորհրդի և պատգամավորների ուղղակի շփումների ամրապնդումը:

Առաջիկայում անհրաժեշտ է ավելի գործուն միջոցներ գտնել խորհրդարանում ակտիվացնելու հանրապետականների գործունեությունը:

Այդ իմաստով կարևորում ենք պատգամավորների օրենսդրական ակտիվ գործունեությունը, առավել ևս պատգամավոր-գաղափարախոս գործառույթը: Ել որտեղ, եթե ոչ խորհրդարանի ամբիոնից առիթ առ առիթ պիտի ինչ այն աշխարհընկալումն ու գաղափարախոսությունը, որը որդեգրել է հանրապետականը:

Եկեք համաձայնեք, որ այդ առումով խոցելի ենք: Վատ ենք օգտագործում մեր ինարավորությունները: Առանձնապես բարվոք չենք պատգամավորների կապը տարածքային կազմակերպությունների հետ:

Կարծում եմ, որ ել ով, եթե ոչ պատգամավորը իր վրա պետք է վերցնի հասարակության լայն խավերի հետ աշխատանքը, կարողանա տարածքներում կուսակցության սկզբունքներին, գաղափարներին իրազեկել իր հսկ ընտրողներին:

Վերջին հաշվով, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ոչ միայն մեր պետության առաջին գրանցում ունեցող կառույցն է, այլ իր ակունքներով սերվում է 60-70-ական թվականների ձևավորված Ազգային Միացյալ կուսակցությունից:

Հասարակությունը, և դա հենց պետության ամրապնդման համար է անհրաժեշտ, պիտի խորությամբ պատկերացնի Ստեփան Զատիկյանի, Աշոտ Նավասարդյանի գործունեությունը, այդ ընթացքում և հետագայում կուսակցությունը ամրապնդող բոլոր քաղաքական գործընթացները, և վերջին հաշվով Վազգեն Սարգսյանի-Սպարապետի ոգեկոչումը մեր ժամանակներում, մեր բոլոր ընկերների, գործիչների գործունեությունը և նվիրումը:

Առանձին գնահատականների անհրաժեշտություն ունի «Միասնություն» խմբակցության գործունեությունը օրենսդրական աշխատանքում:

Այստեղ ակտիվությունն ու պահիվությունն ուղղակիորեն համարժեքում են իրար: Դեռ ավելին, երբեմն-երբեմն պրոբլեմ է դառնում պատգամավորի գուտ ֆիզիկական մասնակցությունը խորհրդարանական աշխատանքներին:

Բնականաբար, երբ խորհրդարանական մեծամասնությունը, մեղմ ասած, իր տեղում չէ, քաղաքական «անակնկալները» խորհրդարանում լարվածություններ են ստեղծում: Այդ դեպքում ուղիղ կապ եմ տեսնում այսօրվա գործընթացների և 1999թ. խորհրդարանի կազմավորման մեջ՝ որպես հետևանք: «Միասնություն» դաշինքի ծրագրերից եր բխում բոլոր քաղաքական ուժերի ներգործուն մասնակցությունը երկրի զարգացման պրոցեսներում:

Խորհրդարանի ձևավորման ընթացքում այդ նպատակով որոշակի լծակներ տրվեցին հիմնականում բոլոր խորհրդարանական կուսակցություններին, ինչը ինքնանպատակ չեր:

Մեզ հայտնի իրադրության փոփոխության պատճառով գնալով խորհրդարանական

կուսակցությունները այդ լծակները օգտագործում են իրենց նեղ կուսակցական շահերին:

Այստեղ արդեն խոսքը ոչ թե ոտևագություններին է վերաբերում, այլ որպես հետևանք՝ գնահատականների խնդիր կա՝ կապված խորհրդարանական մեծամասնության և խորհրդարանական խմբակցությունների փոխհարաբերությունների շրջանակներում:

Մյուս կողմից էլ որոշակի փորձ է արվում առանձին խնդիրների, հարցադրումների առումով համագործակցության եզրեր գտնել խորհրդարանական բոլոր ուժերի հետ: Փաստենք, որ այդ առումով դրական տեղաշարժեր կան: Որպես հետևանք, կարելի է ներկայացնել կոնկրետ իրողություններով:

Դրա հանրագումարը Դարաբաղյան խնդրում խորհրդարանական բոլոր քաղաքական ուժերի համատեղ հայտարարությունն էր: Չեմ կարծում, որ դա միայն ու միայն նախադեպ է մնալու:

Այդ գործնթացներին խորապես կարող էր նպաստել խմբակցության համընթաց, հավասարակշռված գործունեությունը: Թերևս խոսքը միայն չի կարող վերաբերվել խմբակցության ներսում առաջացող հակադրություններին, ավելին, բզկտող է առանձին պատգամավորների ոչ պատշաճ, երբեմ «Միասնության» դիրքորոշումներին չհամապատասխանող հայտարարությունները:

Չես հասկանում, կամ ել շատ հասկանալի է, մարդը առաջնորդվում է «Այստեղ, այստեղ և ամենուր» անբարո կեցվածքով: Եվ ասեմ, կոնկրետ անուն չեմ հրապարակում ոչ թե պատշաճությունից ելնելով, այլ ընդգծվածություն չապահովելու համար: Այս մասին ել պետք է մտածել: Եվ պետք է մտածենք մենք՝ հանրապետական պատգամավորներս:

Չերծ լինելով ամեն տիհի բանսարկություններից՝ դա դեռ չի նշանակում անբասիրություն, հասարակությունից պետք է հեռացնել, այսպես ասած, «քաղաքական գործիչներին»:

Եվ ընդհանրապես, վերջին շրջանում, ակնհայտ է, ծևակորվում է իշխանատենչների մի շրջանակ, խոսքը վերաբերում է օրավոր իշխանություն ունենալու կարուտախսուվ տառապող հասարակությանը հայտնի գործիչների, որոնք մեր հանդուրժողականությունից օգտվելով, հիստերիայի ալիք են բարձրացնում:

Եվ վերջում, սովորաբար ամփոփելիս օգտագործում են «վատահեցնում եմ» բառը, շրջանցում են այդ բառը, պարտավորեցնում եմ՝ բարձր պահիք և կոչմանդ արժանի եղիք, հանրապետական պատգամավոր, մեծ և փոքր արգելվելու հաղթահարել ես, կուսակիցներդ կողքիդ են: Համոզված եմ՝ մեր գործերը արդյունքներ տալու են:

Ծնորհակալություն:



ՀՀԿ 6-ՐԴ ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐՈՒՄ «ՑԵՂԱԿՐՈՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՎԱԶԳԵՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգարժան հյուրեր,

Ծրագրային ելույթից հետո դժվար է ծավալուն ելույթ ունենալ:

Կներկայացնեմ երիտասարդական կազմակերպության հետ կապված խնդիրները և մեկ-երկու քաղաքական դիտարկում:

Պատահական չէ, որ կուսակցության համագումարն սկսեց իր անմահ մեռելների շիրիմներին այցելելով և ծաղկեասակներ դնելով: Յօնմեական պետությունը այսքան ժամանակ գոյատևեց, քանի դեռ մարդիկ իրար հանդիպելուց ասում էին՝ փառք մեռելներին: Բայց երբ նրանք մոռացան նախնյանց փառքը և այլևս իրենց մեռելները չեին ոգեկոչում, Յօնմեական քաղաքակրթությունը այլևս դադարեց գոյություն ունենալ: ՀՀԿ-ն կա և կլինի այսքան ժամանակ, քանի դեռ կպահի իր հիմնադիրների հիշատակը, և ոգեկոչողը կլինի այն գործողությունների, որ ժամանակին նրանք էին հիմնադրել:

Երիտասարդական թվու 1999թ-ից այս կողմ ընկած ժամանակահատվածում ունեցել է ձեռքբերումներ, բայց ավելի շատ են բացթողումները:

Ուտք է հիշենք, որ առաջին ձեռքբերումը եվրոպական կառույցին ինտեգրումն է, հայաստանյան երիտասարդական դաշտում իր սեփական և ուրուս տեղը գտնելը: Սակայն, պետք է նշել, որ դեռ ամուր չէ կապը տարածքային 57 կառույցների հետ: Յետիհամագումարյան մեր առաջնային խնդիրը պետք է լինի կազմավորել երիտասարդական թվու տարածքային կազմակերպություններում: Դեռ 1920թ-ին, Նժդեհի ապացուցեց հոգևոր ուժի անհաղթահարելի լինելու փաստը: 60-ականներին ԿՄԿ-ն նույն հոգևոր ուժով հասավ հաղթանակին: 1992թ-ին Վ. Սարգսյանը կոչ արեց մի քանի մահապարտներով կռվելու և հասավ բաղձալի հաղթանակի:

1999թ-ի մայիսին, եղբ Ա. Մարգարյանի գլխավորությամբ ձևավորվում էր նոր կառավարություն, մեր հակառակորդները մտածում էին, որ նույնիսկ պետք չէ դիմել ինտրիգների, որովհետև այդ կառավարությունը առանց դրանց էլ կտապալվի:

Բարեբախտաբար, մեր կառավարությունը իր մեջ ուժ գտավ և արձանագրեց նշանակալի հաջողություններ:

Մեր կարգախոսը պետք է լինի՝ պայքարել և հաղթել:

Կուսակցություն պետք է գան երիտասարդներ, որոնք կյանքի կոչեն այն գաղափարախոսությունները, որոնք արտահայտել են մեր ավագ ընկերները:

Շնորհակալություն: